

Երեւանի քաղաքապետ Երուսի Չախարեան երէկ յայտարարեց, թէ Մարտուն Մաթեւոսեան Երեւանի քաղաքապետի տեղակալ նշանակուած է: Մաթեւոսեան նախապէս եղած է Ազգային ժողովի պատգամաւոր եւ Հ. Յ. Դ. խմբակցութեան անդամ:

Այս նշանակումով քաղաքապետը ունեցաւ հինգ տեղակալ: Չախարեանի համաձայն, տեղակալներու համակարգման առումով եւս եղած են փոփոխութիւններ:

Հ. Յ. Դ. Բիւրոյի նախկին անդամ Մարտուն Մաթեւոսեան 1999էն 2003 եղած է Հայաստանի խորհրդարանի անդամ եւ Ազգային ժողովի Հ. Յ. Դ. խմբակցութեան քարտուղար:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԸ



Հանրապետութեան նախագահ Գոր. Էմիլ Լախուտ երէկ Պապատայի նախագահական պալատին մէջ ընդունեց մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարար Սեպուհի Յովնանեանը: Քննարկուեցան շրջանային վերջին զարգացումները, Լիբանանի դիմագրաւած մարտահրաւերները եւ ներքաղաքական կացութիւնը: Նախագահ Լախուտ եւ նախարար Յովնանեան անդրադարձան նաեւ մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարարութեան առնչուող հարցերու:

ԻՐԱՔ

«ՌՈՅԹԸՐԶ»Ի ԹՂԹԱԿԻՑԻՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՇՏԱՆՁՈՒԻ

Թղթակիցներու պաշտպանութեան յանձնախումբը, որ Նիւ Եորք գտնուող լրատու աղբիւրներու պատուիրակները պաշտպանող խմբակ մըն է, քննութիւն պահանջած է Իրաքի մէջ «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան լուսանկարիչ Մալէն Տանայի աներկիւն ուժերուն կողմէ սպանութեան շուրջ:

Անոր մէկ հաղորդագրութիւնը յայտնած է նաեւ, թէ խմբակը սպանութեան պատճառներուն շուրջ իրապարակաւ չեկուցում կը պահանջէ:

Խմբակին գործա-

դիր տնօրէնը՝ Անն Քուփըր, ըսած է, թէ Մալէն Իրաքի տազանապին հետեւող 15րդ թղթակիցն է, որ կը սպաննուի:

43 տարեկան Տանայ, որ 4 պանակներու հայր էր, Կիրակի օր սպաննուած է հրասայի մը վրայ գտնուող ամերիկացի զինուորներու կողմէ, մինչ Պաղատաի մօտակայ Ապու Ղարիպ բանտին առջեւ ծալալէնի կ'առնէր տեղի ունեցածը:

Փենթագոն, Կիրակի օր հաստատած է, թէ ամերիկեան ուժերը սպաննած են «Ռոյթըրզ»ի մէկ թղթակիցը, ըսելով, թէ դէպքին շուրջ քննութիւն բացուած է եւ թէ յստակ է, որ անոր ինքնութեան գծով սխալ մը եղած է:

Ապու Ղարիպ բանտը ամերիկեան զինա-



Տանայի սպանութեան դատապարտումի բողոքի ցոյց

տնութեամբ գրաւուած մին դէմ վայրոյթին մէկ կեդրոնը դարձած է եւ կան ամբաստանութիւններ, թէ 500 բանտարկեալներէն շատեր արգելափակման ահոելի պայմաններ կը դիմագրաւեն:

Իրաքի 6 բանտարկեալներ սպաննուած են 59 ուրիշներ վիրաւորուած Շաբաթ գիշեր բանտին վրայ իրթիռարձակումի մը պատճառով:

Ամերիկացի զինուորներու կողմէ Մալէն Տանայի սպա-

նութիւնը դատապարտեցին եւ դէպքի ծալքերու բացայայտման պահանջներ կայացուցին Լրագրողներու Միջազգային Դաշնակցութիւնը (Պրիքսէյ), մամլոյ միջազգային հիմնարկը (Վիեննա), Լրագրողներ Առանց Մահմանի կապակերպութիւնը (Փարիզ):

ԴԻՍԱՊՈՒԹԵԱՆ ԿՈՉ

Միւս կողմէ, պատկերասփիւռի «Արա-

Շարք» էջ 3

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԲԱՐՈՎՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՀԵՌԱՑՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽՈՉԸՆԴՈՍՆԵՐ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻՆ

Միջին արեւելեան խաղաղութեան գործընթացին մէջ նուազուած մը յայտարարեց Երեւանի արձանագրեցին իսրայէլացի եւ պաղեստինցի պաշտօնատարներու միջեւ: Այսօր յորդանանի 2 բաղաքներու մէջ ապահովութեան հակակշիռի փոխանցումին շուրջ ժողովին ձախողութեան էն ետք:



Տահլան

որոշում մը:

Համաձայնութեան մը պարագային, 2 Յուլիսէն ի վեր, երբ իսրայէլեան ուժերը Բեթլէհէմէն քաշուած էին, առաջին անգամ ըլլալով իսրայէլեան ուժերը պիտի հեռանային շրջանէ մը:

Պաղեստինցիք կ'ըսեն, թէ չեն կրնար ընթացք առնել իսրայէլեան պահանջներուն՝ ճնշելու գիտեալ խմբակներ, Այսօր յորդանանի այն բաժիններուն մէջ, ուր հակակշիռ չունին:

Մոֆազ կառավարութեան մէջ իր գործակիցներուն Կիրակի օր յայտնած է, թէ երկու բաղաքներուն հակակշիռին փոխանցումը «գնդակը պաղեստինցիներու դաշտը պիտի նետէ»:

Քանի մը շաբթուան ընթացքին երկրորդ անգամ ըլլալով էր, որ քաղաքներու հակակշիռին փոխանցման հարցին վերջնականացումին նպատակով տեղի ունեցած բանակցութիւններ ձախողութեան կը մատնուէին առանց որեւէ համաձայնութեան գոյացնելու:

ԶԻՆԵԱԼ ՊԱՅԵԱՐԻ ԴԻՍԱՅ ՊԱՂԵՍՏԻՆԵՐՈՒ ԳՈՒՉ ԸՄՍԱԶՆԱՍՏՈՒԹԻՒՆ ՍԸ ՄՍՍԱԼՈՒՏ

Միւս կողմէ, պաղեստինցի պաշտօնատարներ երէկ յայտնած են, թէ զինեալ պայքարի դիմած եւ իսրայէլի կողմէ հետապնդուող պաղեստինցիներու գծով իսրայէլի հետ համաձայնութիւն մը մօտալուտ է:

Մոհամէտ Տահլան Ռամալլայի մէջ թղթակիցներու յայտնած է, թէ այդ հարցը յառակից քանի մը օրերուն կը լուծուի: Ան մանրամասնութիւններ չէ տուած, սակայն ըսած է, որ համաձայնութիւնը անոնց ապահովութիւնը պիտի երաշխաւորէ:

Միւս կողմէ պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս Կազալի մէջ այսօր երկօրեայ բանակցութեանց պիտի սկսի 7 շաբթիէ ի վեր գիտազուլի հետեւող հատուածներու հետ՝ գնահատելու համար վիճակը:

Մինչ այդ, գետնի վրայ խռովութիւնները կը շարունակուին: Այսօր յորդանանի հրէական բնակեցման մէկ վայրին մէջ Կիր-

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱՊԻԼ ՇԱՄԹԸ

Նախագահ Լախուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Նապիլ Շամթը, որուն հետ քննարկեց պաղեստինեան իսրայէլեան տարաբնույթի զարգացումները:

Շամթի հետ իր հանդիպումին ընթացքին նախագահ Լախուտ շեշտեց, որ պաղեստինեան իսրայէլեան տարաբնույթի լուծման ի խնդիր որեւէ որոշում չի կրնար պաղեստինցի գաղթականներու տունդարձին հաշուոյն ըլլալ: Ան աւելցուց, որ լիբանանցիներ կը մերժէ Լիբանանի մէջ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը եւ անհրաժեշտ կը նկատէ անոնց տունդարձը:

Նախագահ Լախուտ Շամթի յայտնեց նաեւ, որ Լիբանան կը զօրակցի միջառաքական գործակցութեան բարելաւման, ինչպէս նաեւ արաբական միասնականութեան ամրապնդման ուղղուած որեւէ նախաձեռնութեան, կարեւոր դիմագրաւելու համար շրջանային ներկայ գարգացումները:

Նախագահ Լախուտ վերահաստատեց, որ ոչ մէկ հարց կրնայ ուժի բանեցումով լուծուի, այլ հարկ է ապաւինել միջազգային օրէնքներուն եւ որոշումներուն: Ան աւելցուց, որ ՄԱԿի միջազգային բանաձեւերու գործադրութիւնն է միակ ճանապարհը Միջին Արեւելքի արդար եւ ամբողջական խաղաղութեան կերտման, ինչպէս նաեւ շրջանի բնակիչներուն կայունութեան ապահովման:

Իր կարգին, Շամթ նախագահ Լախուտի պարզեց պաղեստինեան վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ կատարուած հարցազրույթները՝ գործադրելու համար խաղաղութեան ճամբու բարոյսը:

ԱՅՆ ԸՆԴՈՒՆՄԵՆՆԵՐ

Նախագահ Լախուտ ընդունեց Քաթարի ուժանիւթի եւ ելեկտրականութեան հարցերու նախարար Ապտալ Ալթիէն, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ լիբանանեւ-բանաբան յարաբերութիւնները բարելաւելու եւ գործակցելու հեռանկարները:

Նախագահ Լախուտ ընդունեց նաեւ շախտանքի նախարար Ասատ Հարտանը, ճարտարարուեստի նախարար Էլիաս Սքաֆը, տեղեկատուութեան նախարար Մի-



շէլ Սրմազան, նախկին նախարար Ալի Քանտոն, Սպանիոյ մէջ Լիբանանի դեսպան Սամիր Մուպարաքը, Զուրցերիոյ մէջ Լիբանանի դեսպան Սամիր Հըպէյթան եւ պատկերասփիւռի «Մուսթաֆայ» կայանի «Սուփըր-թար» յայտագրի լիբանանցի աստղերէն Մըլհէմ Զէյնը եւ անոր ընտանիքին անդամները:

ԱՅՆ ԸՆԴՈՒՆՄԵՆՆԵՐ

Միւս կողմէ, նախագահ Լախուտ երէկ անակնկալ այցելութիւն մը տուաւ զբօսաշրջութեան կարեւորագոյն շրջաններէն Պհամտուն Մըհաթթայի եւ Ալէյի:

Նախագահ Լախուտի շրջապատը սկսաւ Ալէյէն: Ան այցելեց Ալէյի քաղաքապետարան, ուր ընդունուեցաւ Ալէյի քաղաքապետ Ուաթի Մրատի կողմէ:

Հանդիպումին ընթացքին Մրատ նախագահ Լախուտի ներկայացուց Ալէյի մէջ քաղաքապետարանին կողմէ գործադրուած ծրագրերը: Ապա նախագահ Լախուտ շրջեցաւ Ալէյի մէջ:

Նախագահ Լախուտ Ալէյէն ետք մեկնեցաւ Պհամտուն Մըհաթթայի, ուր ընդունուեցաւ Պհամտունի քաղաքապետ Ըսթա Ապու Ռըթէյի կողմէ: Նախագահ Լախուտ ուրախութիւն յայտնեց Ալէյի եւ Պհամտունի մէջ արարազմութիւն զբօսաշրջիկներու ներկայութեան համար եւ շեշտեց, որ Լիբանանի պարտականութիւնն է զրկարաց ընդունել արար զբօսաշրջիկները, անոնց տրամադրելով ամէն տեսակի գիւրութիւն: Ապա ան շրջեցաւ Պհամտուն Մըհաթթայի մէջ:

ԼԻԲԱՆԱՆ ՊԻՏԻ ՀԱԿԱԳԱՐԶԷ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՏՆԶԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿԸՍԷ ՍԵՍԱՇԱ

Տեղեկատուութեան նախարար Միշել Սրմահա երէկ եգիպտական արքանականային կայանին տուած իր հարցազրոյցի ընթացքին շեշտեց, որ միջազգային օրէնքներու գործադրութեան ապահովումը շրջանին մէջ ապահովութեան եւ խաղաղութեան հաստատման ամէնէն վստահելի միջոցառումն է:

Սրմահա նկատել տուաւ, որ իսրայէլեան օդուծին կողմէ Լիբանանի վրայ կատարուած թռիչքները եւ սահմանային խախտումները ահաբեկչական գործողութիւններ են:

Սրմահա աւելցուց, որ դիմադրութիւնը երկրի մը հիմնական իրաւունքներէն է, իսկ Լիբանանի մէջ ՀՂԿԱՅՄԻՆ լիբանանեան դիմադրութեան կազմակերպութիւնն է: Սրմահա ընդգծեց, որ ՀՂԿԱՅՄԻՆ պիտի հակադարձէ իսրայէլեան որեւէ յարձակումի եւ դիտել տուաւ, թէ ան, որ կը քանդէ դիմադրութեան հակօդայինները, պիտի ստանայ նոյնանման հակազդեցութիւն:

Միւս կողմէ, Սրմահա երէկ լրագրողներու սենտիքայի կեդրոնատեղիին մէջ հանդիպում մը ունեցաւ նշեալ սենտիքայի նախագահ Մոհամէտ Պալպիթի եւ սենտիքայի անդամներուն հետ:

Հանդիպումին ընթացքին Սրմահա յայտնեց, որ գրաւոր տեղեկատուութիւնը կը մնայ հիմնական մարզը, որմէ բոլոր տեղեկատուական միջոցները կ'օգտուին:

ՊԱԱՊՏԱ ԱԼԵՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՍԿԵՆ ՅՍՏԱԿԱՑԱՒ

Ներքին գործոց եւ քաղաքապետութեան հարցերու նախարար Էլիաս Մոր երէկ յայտարարեց, թէ Պապոտա - Ալէյ ընտրաշրջանի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն թեկնածուներէն իր փափաքով քաղաքացիները պէտք է նկատուին ունենան թեկնածուութեան ներկայացման ժամկէտը, որ կը սկսի 18 Օգոստոսէն (երէկ) եւ կ'աւարտի Ուրբաթ, 29 Օգոստոսին:

Իսկ թեկնածուները յետո կոչելու պայմանաժամը կ'աւարտի Չորեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2003ին:

Նշենք, որ այն թեկնածուներ, որ ընտրութեան թուականէն տար օր առաջ յետո կը կոչել իր թեկնածուութիւնը եւ տեղեկ կը պահէ ներքին գործոց նախարարութիւնը, օրինական միջոցներով կը վերստանայ իր պահ գրած գումարին կէսը: Պահ գրուելիք գումարը 5 միլիոն լիբանանեան օսկի է:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶԻ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶԻ

Ինչպէս ծանօթ է, Աշճեան Թուրք կազմակերպած էր բացառիկ շրջապտույտ մը համահայկական 3րդ խաղերու առիթով, 17 - 31 Օգոստոսին, ղէպի Հայաստան, Երեւան, Ծաղկաձոր, Սեւան եւ Արցախ: Խումբին մաս կը կազմեն Պէյրութէն 46 հոգի, Հալէպէն 4 հոգի, Յորդանանէն 18 հոգի, Լոս Անճելըսէն 23 հոգի, ընդամենը՝ 87 հոգի: Խումբը 9 օր Երեւանի մէջ պիտի մնայ, որ ներկայ պիտի գտնուի մարպախաղերու, պիտի մասնակցի ճաշկերպներու, պարահանդէսներու, բլոկներու, պիտի կատարէ ծովային զբոսանում պտույտներ, Հայաստանի եւ Արցախի մէջ պիտի այցելէ պատմական, մշակութային վայրեր, վանքերն ու սրբատեղիները: Պէյրութի խումբը (թիւով 46 հոգի) մեկնեցաւ Աշճեան գրասենեակին առջեւէն, Կիրակի, 17 Օգոստոս 2003ի առաւօտեան ժամը 11:00ին, նոր օրոքարով մը, անցնելով Թրիփոլիէն, Համա եւ Հոմ քաղաքներէն: Հանգստանալէ ետք Մարաշի մէջ խումբը հասաւ Հալէպ: Հալէպի մէջ խումբը այցելեց տեսարժան վայրեր, գիշերը խումբը հիւրն էր պարոն Աշճեանի: Ընտանեկան շքեղ ճաշարանի մը մէջ տեղի ունեցած ընթրիքէն ետք խումբը մեկնեցաւ Հալէպի նորակառոյց օթակայանը եւ ուղղուեցաւ ղէպի հայրենիք: Խումբը Պէյրութ պիտի վերադառնայ 31 Օգոստոսին:

Աշճեան Թուրքի յաջորդ շրջապտույտը 6էն 13 Սեպտեմբեր, «SAPPHIRE» շքեղ զբոսանումով մէկ շաբթուան շրջապտույտ, բացառիկ յայտագիրով՝ գեղուիի ընտրութիւն, հաճելի անակնկալներ, նախաճաշ, ճաշ եւ ընթրիքով, ամէն գիշեր բացառիկ յայտագիր: Գին՝ 495 \$-ն սկսեալ, յունական եւ կիպրական վիզաները ձրի:

Դէպի Հայաստան եւ Արցախ 15էն 22 Սեպտեմբեր եւ 15էն 29 Սեպտեմբեր: Մէկ շաբաթը՝ 450 եւ 599 \$, իսկ 15 օրը՝ 750 եւ 999 \$: Ծառ սահմանափակ տեղեր:

Թռիչքները Հալէպէն, Պէյրութէն մեկնումը հնարաւոր է, որոշ յաւելեալ գումարով:

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶԻ
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ ՅՈՎՍԷՓ ԱՇՃԵԱՆ

«ՈՌՅԹԸՐԶ»Ի ԹՂԹԱԿԻՑԻՆ...

Ծարուակուած Ա. Էջէն մը Չորեքշաբթի օր (վաղը) Իրաք պիտի հասնի: Անոնք անցնող 12 տարիներուն Սէուտական Արաբիոյ անապատային մէկ գաղթականային մէջ ապրած են:

Գետնի վրայ, ամերիկեան ուժերը երէկ 14 տարեկան պատանի մը սպաննած են եւ երիտասարդ մը վիրաւորած Պաղտատի արեւմուտքը գտնուող գիւղի մը մէջ, մինչ պէտքեր կը փրկուէին:

Իսկ ըստ «Ժապիթ» կայանին, իրաքցի 12 գողեր սպաննուած են երէկ Թրիփոլի մէջ Կիւսսիթի մը պայթումին հետեւանքով:

Թրիփոլի մէջ ամերիկեան ուժերու ընդհանուր հրամանատարութիւնը երէկ յայտարարեց, թէ Պաղտատի մէջ սպաննուած է ամերիկացի Կիւսսիթի մը, որմէ քի պայթումի հետեւանքով:

(ԱՅՓ)

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
9:40.- «Առաւօտեան տոմս»
9:45.- «Աստղիկ» կնոջական յայտագիր. հարցազրոյց սենդա-գիտուի Անի Տեկիր-մենճեանի հետ. Գիթ՝ քաղցկեղ պատճառող ուտելիքները
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
3:00.- Արաբերէն յայտագիր. «Սուվոր օթար»ի վերջնական արդիւնքներու հրապարակումէն ետք, հարցազրոյց Ըուէլթեան «Ույ Ասմ» թերթի թղթակից եւ արուեստի բնագիտ ժիհատ Այուպի հետ. կը խօսի արաբական աշխարհի արուեստի եւ լրատուութեան կապին մասին
5:00.- «Տեսակետ» Գիթ՝ «Անգործութեան ընկերային հետեւանքները»

«ԱԶԳԱԿ» - ՄՐՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄ

Ստորեւ կը ներկայացնենք «Ազգակ»ի կազմակերպած ընդհանուր զարգացման մրցումին հինգերորդ հարցարանը:
Այս հարցարանին 5 հարցումներուն ճիշդ պատասխանողներն փձակաձգութեամբ պիտի ընտրուի բախտաւոր մասնակից մը, որ պիտի շահի Պէյրութ - Վառճա - Պէյրութ օդանաւային տոմսակ մը:

Իւրաքանչիւր մասնակից կրնայ խմբագրատուն ուղարկել միեւնոյն անուր կողմ միայն մէկ կտոր:

Սրցանքին մասնակցելու համար պէտք է օգտագործել «Ազգակ»ի էջերուն մէջ տեղադրուած կտորը եւ ոչ լուսապատճեններ:


Հարցարանները պէտք է լեցուին եւ խմբագրատուն ներկայացուին առաւելագոյնը Չորեքշաբթի, 20 Օգոստոս 2003, երեկոյեան ժամը 18:00:

ՎԱՐՑԱՐԱՆ ԹԻՒ 5

- 1.- Ո՞ր տեղի պիտի ունենան 2008ի Ողիմպիական խաղերը:
- 2.- Տիգրան Պետրոսեան ո՞ր մարզաձեւին մէջ աշխարհի ախոյեան հաճողացած է:
- 3.- Ո՞վ էր «Վլետիթթըր»ի գլխաւոր լաւագոյն ժապաւեցի Օսթրա շահած դերասանը:
- 4.- Չորս հայ անդամներ բաղկացած ռոքի ո՞ր խումբը միլիոնաւոր ալպոմներ վաճառած է աշխարհի տարածքին:
- 5.- Ո՞վ է հեղինակը «My name is Aram» («Իմ անունս Արամ է») գիրքին:

ԱՆՈՒՆ.....
ՍԱԿԱՆՈՒՆ.....
ԾՆՆԴԵԱՆ ԹՈՒԿԱՆ.....
ՎԵՈՒՅԱՅՆԻ ԹԻՒ.....

Մասնագիտութիւնդ ՈՍԿԷ ԱՊԱՐԱՆ ԶԱԴ Է ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ



Ա.- Համակարգիչի ԼԵԶՈՒՆԵՐՈՒ եւ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ մասնագիտութիւնը, ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒԹ:

Բ.- Ոսկերչութեան ու կաղապարաշինութեան վարպետ ըլլալու համար, տարիներ եւ շատ ճիգ է պէտք:

ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ ամենակարճ ճամբան է այդ նպատակին հասնելու, առաւել՝ վկայեալ վարպետ ըլլալու համար:
Արձանագրութիւն՝ ամէն օր

ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ.- Տորա՝ հեռ. 01/251320

Arabic header with logos and text: «السفير» «الذئيب» «الاستقبال» «الانوار»

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳԱՊ

«Մ ու թ ա ք պ ա յ |» օրաթերթը գրած է, որ Երիթրոպէի եւ Քալիֆի լիային իսրայէլեան ուժերու հեռացումը կը յետաձգուի, իսկ պատերազմը կը շարունակուի մինչեւ Իսրայիլի անվտանգութիւնը կը հանդիսանայ գլխաւոր լուրերը: Երիթրոպէի թերթը նաեւ անդրադարձած են Ամերիկայի եւ Քանադայի մէջ պատահած էրեկտրականութեան հոսանքի ընդհատումին եւ անոր պատճառներուն:

«Լիուս» համաձայն, Իսրայիլ կառած կը մնայ անցարգէնէն օրաթերթին եւ արմատական իմբակցութիւններու ղեկավարներու ձեռքաւորման ու իր տուած խոստումն էն հրաժարելով չի հեռանար Կապալի քաղաքներէն:

«Անուար» գրած է, թէ Արաքսայի յայտարարեց, որ իսրայէլեան շրջափակումը հետըզ-չափով բարելաւուեցաւ, սակայն նիւթական առումով տակաւին կը մնայ մեծ դժուարութիւններու դէմ յանդիման: Ըստ թերթին, Սֆէյր պատերազմը պետութիւնը կը հրաւիրէ հանրային գումարները սեփականացնողները հետապնդելու:

«Նահար» դիտել տուած է, թէ Չորեքշաբթի օր պիտի սկսի Երեւանի մէջ իսրայիլեան ուժերու հաստատեան խալիփի մէջ:

«Քիֆահ Արապի» համաձայն, Սուրիայ կը փափաքի օգտուիլ Մալիի վերածառութեան, եւ Ասառ Մա-

ԻՐԱՔԵԱՆ ԻՐԱՂԱՐԶՈՒԹԻՆՆԵՐ

«Քիֆահ Արապի» նշած է, թէ Քերքուքի քարիւղատարէն ետք, Պաղտատի շուրերու խողովակներ պայթումներու ենթակայ կը դառնան: Բոնագրաւող ուժերը երկու անգամ օր օր ապրեցան Իրաքի մէջ, ուր 12 ամերիկացիներ վիրաւորուեցան, գրած է օրաթերթը:

Ըստ թերթին, Միացեալ Եմիրութիւններ կ'ընդունին իրաքեան իշխող խորհուրդին օրինականութիւնը եւ հանդիպում կ'ունենան պալատական կայանները: Ըստ թերթին, Միացեալ Եմիրութիւններ կ'ընդունին իրաքեան իշխող խորհուրդին օրինականութիւնը եւ հանդիպում կ'ունենան պալատական կայանները:

«Տիար» գրած է, թէ Իրաքի մէջ 11 իրաքցիներ եւ 11 ամերիկացիներ սպաննուեցան, իսկ քարիւղի վնասները կը հասնին օրական 7 միլիոն տոլարի:

«Սաֆիր» գրած է, թէ Պաղտատ առանց շուրի մնաց, իսկ ղէպի Թուրքիա ուղղուող քարիւղատարին հոս-

Arabic advertisement for «ԱՆՍԱՅ ԶԱՅՆ» (ANSAY ZAYN) newspaper. Includes contact info: «ԱՆՍԱՅ ԶԱՅՆ»-ԵՆ ԱՄԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԼՍԵՑԻԸ «ՏԵՍԱԿԵՏ» ՅԱՅՏԱԳԻՐԸ. Երեքշաբթի, 19 Օգոստոս 2003ին, կիսօրը ետք ժամը 5:00ին, «ՏԵՍԱԿԵՏ» յայտագրին ցիւքն է. «ԱՆԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ» Կը խօսին՝ ՍԵՂԱ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ ՍԱԳՕ ԱՐՄԵՆԵԱՆ. Յայտագրին ամբողջ տեղողութեան հեռաձայնեցել «Վանայ Չայն»՝ 241199 եւ 267657 քիւրուկ, ու տուել ձեր կարծիքը:

ԲԱԶՄԱՇՆԵՐՍ ՈՒ ՏԱՐՈՂՈՒՆԱԿ Է Ն. Յ. ԴԻ ԳՈՐԾԸ ԸՂԱՅ ԱՏԻԿԱ ՎԱՅԱՍՏԱՆԻ ԹԷ ՍՓԻՒՌԻ ՄԷՋ

Հայաստանի նոր կազմուած կառավարութեան մէջ Ն. Յ. Դաշնակցութեան ստանձնած պատասխանատուութիւնները ուղղակիորէն կ'առնչուին ժողովրդային ամենալայն խաւերուն: Գիւղատնտեսութեան, առողջապահութեան եւ ընկերային ապահովութեան նախարարութիւնները, որոնք ամէնօրեայ շփում ունին ժողովուրդին հետ, այսօր կը ղեկավարուին դաշնակցական նախարարներով:

Նորանկախ եւ յատկապէս ամբողջատիրական դրութեան վայրի դրամատիրութեան ու ազատ շուկայական դրութեան անցած երկրի մը համար անխուսափելի եւ բնական պիտի թուի այդ անցումին ցաւագին ընդմիջը: Ասոր վրայ եթէ աւելցնենք իշխող վարչակազմներուն բարձրաստիճան, միջին եւ վարի խաւի անձնակազմներուն ցուցաբերած անբարեխիղճ մտեցումը, այդ պարագային աւելի ապրջ կը դառնայ այն իրողութիւնը, որ ժողովուրդը կը տուալտի ընկերային ու տնտեսական ծանր խնդիրներու բեռան տակ:

Ընկերային ապահովութեան նոր նշանակուած նախարար Աղոտան Վարդանանի երէկուան ելոյթը, նախարարութեան պաշտօնէութեան առջեւ, բարացուցական է այս կողմատից: Ան հանրութեան յստակութիւնը րուաւ, թէ պաշտօնէութեան անբարեխիղճ վերաբերումին գոհ կը դառնայ ժողովուրդը, յատկապէս անոր չքաւոր եւ անապառայան խաւը, եւ թէ ինք թոյլ պիտի չտայ, որ կացութիւնը այսպէս շարունակուի:

Նախարար Վարդանանեան բնականաբար կը խօսի միայն իր ստանձնած պատասխանատուութեան ծիրէն մէջ բրձանազրուած յոռի երեւոյթներուն մասին: Եւ ընկերային ապահովութեան նախարարութիւնը ժողովուրդին առօրեային հետ ուղղակի կապ ունեցող ոլորտներէն միայն մէկն է: Կան այլ ոլորտներ եւս, ուր պատկերը շատ հաւանաբար աւելի վարդագոյն է՝ հաշուի առնելով անցնող տարիներուն թէ՛ բնական պայմանները, եւ թէ մասնաւոր վարչական քրոնիկ անբարեխիղճութիւնները, որոնք մէջ մեծ դեր ունի խորհրդային մտածելակերպը:

Դաշնակցութեան նկարագրին յարիր է ժողովուրդին հարցերը մակտէն դիմադրաւելու մտեցումը: Ան միշտ եղած է հայրութեան ընդհանրական շահերու պաշտպանի դերին մէջ՝ առանց խուսափելու պատասխանատուութենէ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳԵԿԻԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ 10 ՏԱՐԵԿԱՆ

Լեռնային Ղարաբաղի Գեղանկարիչներու Միութիւնը վերջերս յորեկանական զեղարուեստական ցուցահանդէսով մը նշեց իր հիմնադրութեան 10ամեակը: Յուշանդէսի բացման հանդիսաւոր արարողութեան ներկայ գտնուած են մշակութային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, կերպարուեստի երկրպագուներ, ինչպէս նաեւ Հայաստանի զեղանկարիչներու պատուիրակութիւնը՝ Կարէն Աղամեանի գլխավորութեամբ:

«Ես այս ցուցահանդէսը կարեւոր կը նկատեմ եւ իրականացումի փաստով, եւ անով, որ մենք՝ Հայաստանի զեղանկարիչներս այստեղ ենք: Հայաստանի Գեղանկարիչներու Միութիւնը եւ Արցախի Գեղանկարիչներու Միութիւնը՝ ստիպ կըրանք թիչ մը տարօրինակ թուրի, բայց ամէն պարագայի մենք մէկ ազգ եւ մէկ մշակոյթ կը ներկայացնենք», րուաւ Կարէն Աղամեան:

տուութենէ, յատկապէս այն պահերուն, երբ ճակատագրականորէն ծանր կացութիւն ստեղծուած է Հայաստանի ու հայ ժողովուրդին համար: Նախարար Վարդանանի մտեցումը լրիւ կը համընկնի Դաշնակցութեան նկարագրային այս գիծին: Տարբեր չէր կրնար ըլլալ: Դարձեալ այս օրերուն եւ այս անգամ Սփիւռքի մէջ, Ն. Յ. Դաշնակցութիւնը դէմ յանդիման կը գտնուի քաղաքական, ազգային, մշակութային-կրթական թէ՛ այլ բնոյթի հարցերու, որոնք եւս հայրութեան ընդհանուր օրակարգին մաս կը կազմեն:

Ամերիկայի մէջ գործող տեղական, շրջանային թէ՛ դաշնակցային մակարդակներու վրայ գործող Հայ Դատի յանձնախումբը, իւրաքանչիւրը իր դաշտին մէջ, լծուած են օրակարգային համապատասխան հարցերու լուծումին:

Այսպէս, Քալիֆորնիոյ հանրային վարժարաններուն մէջ Յեղասպանութեան ուսուցումին կապուած գործնական հարցեր իրենց համապատասխան լուծումը ստանալու վրայ են: Շարժապատկեր պատկերասփիւռի մարզին մէջ հայութեան առնչուող խնդիրներ կը հետապնդուին նահանգային օրինապահ մարմիններուն մօտ: Քոնկրէտին մէջ Հայկական Յեղասպանութեան բանաձեւին զօրակցող քոնկրէտ սականներուն թիւը (ներկայացուցիչներու ճան թէ Մերկոյտին մէջ) օրէ օր աճ կ'արձանագրէ: Մօտակապէս իննսուներեքստեղծ է թիւը ամերիկեան կրօնական, կրթական, մարդկային եւ քաղաքացիական իրաւունքներու հարցերով զբաղող կազմակերպութիւններու, որոնք հրապարակաւ եւ պաշտօնապէս յայտնած են իրենց զօրակցութիւնը նշեալ բանաձեւին: Լոս Անճելըսի մէջ Հանրաբարձութեան թանգարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան նկատմամբ ցուցաբերած... անհանդուրժողութիւնը նոր տարողութիւն մը տուաւ Հայ Դատի Յանձնախումբերուն աշխատանքին ու նոր մարտահրաւէրներ ստեղծեց, որոնք դիմադրաւոր մը են անյետաձգելի:

Թուրքական իշխանութիւնները բնականաբար ձեռնածալ չեն ամերիկահայ քաղաքական թատերարժեքի այս արձանագրուող վրայ հայրութեան գրուող այս հոլովոյթներուն ի տես: Արդարեւ, եւ ինչպէս ծանօթ է, նկատելով Յեղասպանութեան բանաձեւին վայելած յարաճուն զօրակցութիւնը, Անգարա յատուկ առաքելութեամբ գործի լծեց իր ղեկավարութեանը, որպէս-հայ կազմակերպութիւններու համար: Թուրքական իշխանութեան ղեկավարութեանը համարեալ չեն ամերիկահայ քաղաքական թատերարժեքի այս արձանագրուող վրայ հայրութեան գրուող այս հոլովոյթներուն ի տես: Արդարեւ, եւ ինչպէս ծանօթ է, նկատելով Յեղասպանութեան բանաձեւին վայելած յարաճուն զօրակցութիւնը, Անգարա յատուկ առաքելութեամբ գործի լծեց իր ղեկավարութեանը, որպէս-հայ կազմակերպութիւններու համար:

Լուծեալ գործի լծեց իր ղեկավարութեանը համար ինչպէս թեզեզեզ «տեսակցի» ամերիկահայ կազմակերպութիւններուն հետ ու «ծանօթանայ» անոնց տեսակցութեանը: Թրքական այս խորամանկութիւնը կը միտէր ձախողեցնել կամ առնուազն արգելակել Հայկական Յեղասպանութեան բանաձեւին որդեգրումը՝ ամերիկեան քոնկրէտական շրջանակներուն ցոյց տալով, թէ արդէն իսկ հայ-թրքական «երկ-իստութիւն» մը կայ, որ «ժամանակավրէպ» կը դարձնէ նման բանաձեւի մը որդեգրումը:

Հայ Դատի Յանձնախումբը, իրրեւ ամերիկահայութեան քաղաքական թատերարժեքի հիմնական դերակատար, յստակօրէն կեցուածք ճշդեց այս ուղիով:

Այս դէպքերուն ընդհանուր պատկերին դիմաց, կը տեսնենք, թէ Հայաստանէն մինչեւ Սփիւռք, որքան տարարոյթ են Հ. Յ. Դաշնակցութեան «անելիքները»: Մեզի կը ընայ ոչ մէկ վայրկեան գիշիլ մեր աշխրջութեան ու զգօնութեան, որովհետեւ հայրութեան շահերու պաշտպանութեան գործը «սիրողական» կամ ժամանակաւոր ընդթ չունի: Հետեւողականութիւնը պայման է:

Խմբագրական «ԱՊՊԱՐԵՋ»

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԵՐԻ ԵՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ԱՅՍ ՏԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 121 ԳԻՐԳ

Այս տարի պետական պատուէրով պիտի հրատարակուի 121 գիրք: Ըստ Հայաստանի մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերու նախարարութեան դրահրատարակական գործակալութեան պետ Էտտալար Մելիտոնեանի, այս տարին կը զբեղանայ միայն հրատարակուող գիրքերուն քանակով, այլ նաեւ՝ ծրագրին մէջ ընդգրկուած հեղինակներուն քաղաքացիական թիւը:

Գիրքերը իրենց ուղղութեամբ կը բաժնուին 4 խումբի՝ մասնակցութեան, գիտահետազոտչի, հանրագիտարանային եւ այլ գրականութիւն:

Արդէն հրատարակութեան յանձնուած են պարսկահայ արձակագիր Նազիկ Նազեցիի «Իրանական հեքիաթներ» ու պարսկերէնէ հայերէն թարգմանութիւնը, Գրիգոր Նարեկացիի «Մատենանոց բնութեան» ստեղծագործութեան Լամբրոնացիի ձեռագրի լուսանկարները, Արտակ Կողկեանի «Պատմութիւններ ֆիզիկական մասին» գիրքը, Պարոյր Սեւակի «Մեր բրդութիւնները» առանձին ժողովածուով, Գուրգէն Մահարիի «Անտիպոն»-ը, ժամանակակից գրողներէն Հրանդ Մաթեւոսեանի եւ Աղասի Այվազեանի գործերը, ինչպէս նաեւ պատմաբան Նիքոլայ Յովհաննիսեանի «Յեղասպանութիւնը իրրեւ ամենացեղասպանութիւն» գիրքը:

ՏԵՍԱԿԱՆ ԴԱՌԵՐՈՒ ԼՈՒՍԱՆՅՔԻՆ ՎՐԱՅ


Յուլիսի վերջին օրն է: Երեւան հասած են հայեր, երիտասարդներ՝ աշխարհի չորս ծագերէն: Երեւանի մէջ խոսք կայ, ուսանողներ ցոյցի դիմած են նախագահական ապարանքին առջեւ: Հայրենիք եկած զբօսաշրջիկ հայ երիտասարդներու եւ Հայաստանի ուսանողներուն միջեւ ո՛ր է կամուրջը: Առաջիններուն համար արձակուրդ է, եկած են իրենց ալազ-պոլազ հագուստակապուստով, արեւմտեան սպառողական ընկերութեան եւ արտառոցութիւններու շրջուն դեսպաններ՝ նազի եւ ոռքի ազմկարարութեամբ: Ըսել, որ երկու աշխարհներու երիտասարդութիւնը իրարու մօտեցնելու համար մէկուս տեղատուութիւնը իրրեւ յառաջդիմութեան օրինակ կը ներկայացուի միւսին, փոխան հարագատութեան եւ անոր տարածման ու պաշտպանութեան, հասարակ յայտարար, որուն վրայ ինքնուրիշ հաստատելու մնացած է հիմնական գրաւականը: Եթէ դուրսէն եկածները գիտնային եւ ըմբռնէին թէ ինչո՛ւ երիտասարդները ցոյց կ'ընէին նախագահական ապարանքին առջեւ, իսկական կամուրջ կը հաստատուէր:

